


# ՖՐԱՆՍԱՀԱՅ ԵՐԱԺԻՇՏ, ԵՐԳԱՀԱՆ, ԵՐԳԻՉ ԵՍԱՅԻ ԱԼԹՈՒՆԵԱՆ

*Posted on August 8, 2016 by Keghart*




Category: [Opinions](#)



Հեռախոսային Հարցազրույցը վարեց՝ **Համո Մոսկոֆեան**, Պեյրուզ - Փարիզ, Յուլիս 2016

**Պրն.Աթուևեան, կրնա՞ք դուք ձեզ ծանոթացնել եւ ինչպիսի գործունեութիւն կը ծաւալէք հայկական թէ ֆրանսական համամարդկային երաժշտութեան աշխարհին մէջ:**

Ես, Եսայի (Եսայի) ֆրանսական «անուանակոչութեամբ» փարիզահայ երաժիշտ, երգահան ու երգիչ եմ, ու կ'աշխատիմ ինչպէս արդի թէ հայկական աւանդական երաժշտութեան, այնպէս ալ օտար, դասական թէ «փօփ», Եսդրատային համաշխարհային երաժշտութեան անդաստանին մէջ, ուր փայլած են ու կը փայլին Քուիկսի Ճոնզի, Մայքըլ Ճեքսընի նման «աստղեր»: Մեծ սեր ունիմ նաեւ ջութակի հանդէպ: Մէկ խօսքով, հայ մշակոյթն ու երաժշտութիւնը տարածել մասնաւորաբար օտարներուն, որոնք ինչպէս նկատած եմ, կը սիրեն որ հայ եմ ու շատ բարձր կը գնահատեն Հայաստանն ու մեր դարաւոր անզուգական ստեղծագործութիւնները:




Իմ արմատները կու գան Արեւմտեան Հայաստանէն ու Կիլիկիայէն: Յեղասպանութենէն փրկուած Եսայի քահանայ մեծ հայրս եւ տարիներ շարունակ անապատին մէջ, Սուրիոյ ցեղախումբերու կողմէ որդեգրուած եւ ապա Ֆրանսա հարազատները վերագտած միւս մեծ հայրս՝ Նշան, որոնց կեանքի պատմութիւնը եւ անհաւատալի թուացող փրկութիւնը թուրքին եաթաղանէն զիս ներշնչած են միշտ ստեղծագործելու

հայկական շունչով եւ գայն փոխանցել բազմամշակոյթ ժողովուրդներու, իմ շրջագայութիւններուս մէջ: Ազատատենչ Արցախ կատարած ճամբորդութիւնս, վերջերս գիս գօտեպնդեց որպէսզի դիմեմ վճռական քայլերու երաժիշտի ու երգահանի, երգիչի առաքելութեանս մէջ:

Հեռախօսային Հարցազոյցը վարեց՝ **Համօ Մոսկոֆեան**, Պէյրութ - Փարիզ, Յուլիս 2016

**Պրն.Ալթունեան, կրնա՞ք դուք ձեզ ծանօթացնել եւ ինչպիսի գործունեութիւն կը ծաւալէք հայկական թէ ֆրանսական համամարդկային երաժշտութեան աշխարհին մէջ:**

Ես, Եսայի (Եսայի) ֆրանսական «անուանակոչութեամբ» փարիզահայ երաժիշտ, երգահան ու երգիչ եմ, ու կ'աշխատիմ ինչպէս արդի թէ հայկական աւանդական երաժշտութեան, այնպէս ալ օտար, դասական թէ «փօփ», Եսդրատային համաշխարհային երաժշտութեան անդաստանին մէջ, ուր փայլած են ու կը փայլին Քուրնսի Ճոնզի, Մայքըլ Ճեքսընի նման «աստղեր»: Մեծ սեր ունիմ նաեւ ջութակի հանդէպ: Մէկ խօսքով, հայ մշակոյթն ու երաժշտութիւնը տարածել մասնաւորաբար օտարներուն, որոնք ինչպէս նկատած եմ, կը սիրեն որ հայ եմ ու շատ բարձր կը գնահատեն Հայաստանն ու մեր դարաւոր անզուգական ստեղծագործութիւնները:



Իմ արմատները կու գան Արեւմտեան Հայաստանէն ու Կիլիկիայէն: Ցեղասպանութենէն

փրկուած Եսայի քահանայ մեծ հայրս եւ տարիներ շարունակ անապատին մէջ, Սուրիոյ ցեղախումբերու կողմէ որդեգրուած եւ ապա Ֆրանսա հարազատները վերագտած միւս մեծ հայրս` Լշան, որոնց կեանքի պատմութիւնը եւ անհաւատալի թուացող փրկութիւնը թուրքին եաթաղանէն զիս ներշնչած են միշտ ստեղծագործելու հայկական շունչով եւ զայն փոխանցել բազմամշակոյթ ժողովուրդներու, իմ շրջագայութիւններու մէջ: Ազատատենչ Արցախ կատարած ճամբորդութիւնս, վերջերս զիս գօտեակոծեց որպէսզի դիմեմ վճռական քայլերու երաժիշտի ու երգահանի, երգիչի առաքելութեանս մէջ:

### **Որո՞նք են ձեր ծրագիրները մօտիկ ժամանակներս:**

Արդէն իսկ պատրաստած ենք «Արմենիա» ծրագիրը, որուն նպատակը պիտի ըլլայ ներկայացնել արեւելեան եւ հայկական, արեւմտեան երաժշտութիւնը ինչպէս Մայր Հայրենիքի թէ Սփիւռքի, այնպէս ալ օտար ունկնդիրներուն եւ համաշխարհային երաժշտութեան միլիոնաւոր հետեւորդներուն: Մեր գլխաւոր նպատակն է Հայաստանը իր մշակոյթով ու երաժշտութեամբ դարձնել խաղաղութեան կամուրջ եւ դրօշակակիր, խռովայոյզ այս աշխարհին մէջ: Այս նպատակով է, որ շուտով պիտի այցելեմ Հայաստան, ձայնագրելու շարք մը նոր երգեր եւ պարային երաժշտութիւններ` ինչպէս «Քոչարի»:

### **Ինչպէս իմացանք, հրաւիրուած էք նաեւ Պէյրութ համերգներ տալու, ի՞նչպէս կը տեսնէք ձեր ապագայ այցը Սփիւռքի մայրաքաղաք:**

Ինծի համար մեծ ուրախութիւն եւ պատիւ է ըլլալ Պէյրութ, ուր տասնամեակներէ ի վեր հայ ծաղկուն գաղութ է եւ մշակոյթ ու երաժշտութիւն գոյութիւն ունի, ամենէն բարձր արհեստավարժ մակարդակով: Համերգներու պիտի միանան լիբանանցի եւ լիբանանահայ երաժիշտներ ու երգիչներ ու կը ծրագրեմ անմոռանալի դարձնել եւ կամրջել Արեւելք եւ Արեւմուտք, հայկական ու լիբանանեան մեծ աւանդոյթներ ունեցող դարաւոր մշակոյթները: Այս միջոցառումը եզակի հանդիպում մը պիտի ըլլայ հազարամեայ Պէյրութի մէջ:

